600.0330.30.06.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2010 թվականի №330Ն
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N4 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 3-րդ կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N4 որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.
   1) Կարգի 2.1 կետի 7-րդ ենթակետում «ջերմամատակարարման» բառը փոխարինել «ջերմային» բառով.
   2) Կարգի 3.5 կետից հանել «, մինչև շինարարական աշխատանքների սկիզբը,» բառերը.
   3) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.5.1 կետով.

«3.5.1 Սույն կարգի 2.1 կետի 2-րդ ենթակետում նշված գործունեության համար Հայտը Հանձնաժողով կարող է ներկայացվել նաև փոքր հիդրոէլեկտրակայանների

և վերականգնվող էներգետիկ այլ ռեսուրսների օգտագործման նպատակով կառուցված կայանների՝ նախագծով նախատեսված դրվածքային հզորությունը մասնակի գործարկելու հնարավորության դեպքում, մնացած հզորությունը գործարկելով մինչև կառուցման Լիցենզիայով նախատեսված ժամկետի ավարտը: Այս դեպքում Լիցենզավորված անձն ազատվում է գործարկված հզորությանը համապատասխան երաշխիքային պարտավորությունից»:

4) Կարգի 3.18 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3.18 Էլեկտրական կամ ջերմային (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կայանների կառուցման Լիցենզիա ունեցող Անձը մինչև Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ: Անձը պարտավոր է այդ աշխատանքներն սկսելուց առաջ տեղյակ պահել Հանձնաժողովին՝ ներկայացնելով շինարարության շահագործման փաստագրման ակտը և էներգատեղակայանքի գործարկման եզրակացությունը: Կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում բաշխման ցանց առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան պայմանագրով, որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է Հանձնաժողովը, և որը ենթակա է գրանցման Հանձնաժողովում»:

5) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.21 կետով.

«3.21 Սույն կարգի 3.18 կետով պահանջվող էներգատեղակայանքի գործարկման եզրակացությունը ներկայացվում է 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական, 5,8ՄՎտ-ից բարձր դրվածքային հզորության ջերմամատակարարման, ինչպես նաև միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման դեպքում»:

6) Կարգի 5.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5.2 Հայտն իր մեջ պետք է պարունակի՝

1) Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Լիցենզավորված անձի հիմնավորումները, որտեղ պետք է նշված լինի հայցվող ժամկետը,
2) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը,

3) Լիցենզավորված անձը գրանցող պետական լիազորված մարմնի տեղեկանքը՝ Լիցենզավորված անձի կանոնադրությունում կատարված փոփոխությունների մասին: Եթե Լիցենզավորված անձի կանոնադրությունում կատարվել են փոփոխություններ, ապա ներկայացվում են նաև այդ փոփոխությունները,

4) սույն կարգի 2.1 կետի 1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ ենթակետերում նշված գործունեության տեսակների իրականացման դեպքում՝ իրականացված աշխատանքների մասին տեղեկանք, որտեղ պետք է նշվեն նաև աշխատանքների չիրականացման պատճառները և դրանց իրականացման համար անհրաժեշտ ժամկետը.

7) Ուժը կորցրած ճանաչել Կարգի N2 հավելվածի աղյուսակի 6-րդ և 9-րդ կետերը, N3 հավելվածի աղյուսակի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերը, N8 և N9 հավելվածները և N10.1 հավելվածի 3.3 կետը.

8) Կարգի N2 հավելվածի աղյուսակի 7-րդ կետում «Հատուկ ջրօգտագործման թույլտվություն» բառերը փոխարինել «Ջրօգտագործման թույլտվություն» բառերով.

9) Կարգի N10.1 հավելվածի 1.4 կետի ա) ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ. «ա) երաշխավորագրի գործողության ժամկետը, որը պետք է առնվազն մեկ ամսով ավելի լինի հայտով նախատեսված Լիցենզիայի գործողության ժամկետից,».

10) Կարգի N10.1 հավելվածի 2.2 կետի «տեղակայվելիք» բառը փոխարինել «հաշվարկային» բառով, 3.4 կետի «3.1, 3.2 և 3.3 կետերի» բառերը փոխարինել «3.1 և 3.2 կետերի» բառերով, իսկ 3.5 կետի «3.2 և 3.3 կետերում սահմանված դեպքերում» բառերը փոխարինել «3.2 կետում սահմանված դեպքերում» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱՋԱՐՅԱՆ

ք.Երևան
30 հունիսի 2010թ.